

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՈՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԸ
«ԱԻԵՏԱԲԵՐ»-ՈՒՄ

ՎԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԵԼԻՄԵԱՆ

*...զի ոչ սիրեն Հայքս իմաստ կամ գիտություն,
այլ ծոյք են եւ ձանձրացողք:
Անանիա Շիրակացի*

1840-1860-ական թթ. հայ ժողովուրդի քաղաքական ու տնտեսական զարգացման հիմնահարցը առաջնահերթ նշանակություն ստացավ: «Հասարակական հոսանքները հայ իրականության մեջ արտահայտել են որոշակի սոցիալական խմբերի աշխարհայացքային պատկերացումներ **ազգի կացության** և այդ **զարգացման** հեռանկարների նկատմամբ: Ըստ այդմ, մենք առանձնացնում ենք երկու խոշոր հասարակական հոսանքներ՝ ազգային-պահպանողական և ազատական: Դրանց բնութագրական գծերը ածանցվում են, նախ, աշխարհայացքային մոտեցումներից (ազգի պահպանության և զարգացման վերաբերյալ պատկերացումները, ազգային եկեղեցու, ավանդույթների, մշակույթի զարգացման ու գնահատման հիմնահարցեր, վերաբերմունքը ազգի հասարակական ու քաղաքական դրության նկատմամբ) և ապա, հայ հանրության սոցիալական շերտերի գնահատման ու դրանց տրամադրությունների և ձգտումների արտացոլման բնույթից»¹, - գրում է մամուլի տեսաբանը:

Հայ գործիչներու մէկ մասը կը կարծէր, թէ օսմանեան եւ ռուսական ճնշումներուն դիմակայելու համար անհրաժեշտ է պահպանել **ազգին աւանդոյթները, լեզուն եւ կրօնը**: Ժողովուրդի տնտեսական դրութեան բարելաւման հիմնական միջոցները անոնք կը համարէին **երկրագործութեան, արհեստներու եւ առեստուրի զարգացումը**: Այսպիսի հայեացքներ ունէր Գաբրիէլ Այվազովսկին, երբ Աւետարեք Հայաստանեայց «Մասեաց աղանի» ամսագրի խմբագիրն էր (1852): Մեր վարդապետը կը պաշտպանէր **կրօնի եւ եկեղեցիի ազգապահպան նշանակութեան գաղափարը**: Գ. Այվազովսկին կը գտնէ, թէ կրօնի ու ազգի փոխարարութեան հարցը քննելէ առաջ պէտք է առաջնորդուիլ

¹ Ա. Խառատյան, Հայ հասարակական հոսանքները XIX դարի 50-60-ական թվականներին // Պատմա-բանասիրական հանդես, 2006, թիվ 1, էջ 272:

ն՛չ թէ երոպական երկիրներու փորձով, այլ ազգային կեանքի հնարա-
ւորութիւններով: Ըստ անոր, պետաիրաւական կայուն համակարգ ու-
նեցող, քաղաքական սկզբունքներով առաջնորդուող Անգլիոյ, Գերմա-
նիոյ, Ֆրանսայի համար ներազգային կրօնական տարանջատուածու-
թիւնը էական նշանակութիւն չունի ու ազգային հիմնախնդրի չի վե-
րածուիր: Այնինչ Արեւելքի մէջ այդ ունի էական նշանակութիւն, քանզի
այստեղ ազգային պատկանելութիւնը զգալիօրէն կը նոյնանայ դաւա-
նուող կրօնին հետ: Այդպէս է յատկապէս Օսմանեան կայսրութեան
մէջ: Ու թէեւ կրօնի ու ազգի տարբեր երեւոյթներ ըլլալը անառարկելի է,
սակայն հայ ազգը «ներկայիս իր հաւատքին ու աստուածապաշտու-
թեան արարողութիւններէն զատ ազգային հոգիի նեցուկ մը եւ ներքին
միութեան կապ մը չունի»²:

Արեւմտահայ իրականութեան մէջ առաջադիմական գաղափար-
ներ կը քարոզէին Մկրտիչ Խրիմեանը (1820-1907), «Մեղու» պարբերա-
կանի խմբագիր Յարութիւն Սվաճեանը (1831-1874): Վերջինս համազ-
գային միասնութեան ջերմ պաշտպան էր եւ Միքայէլ Նալպանտեանին
հետ ունեցած իր կապերով կը նպաստէր արեւմտահայ ու արեւելահայ
հատուածներու հոգեւոր-մշակութային մերձեցումին: Յ. Սվաճեանի
գաղափարակիցն էր Զմիւռնիոյ հայ գաղթավայրին մէջ գործող Գրիգոր
Զիլինկիրեանը (1839-1923): Ան իր խմբագրած «Օաղիկ» ամսագրին մէջ
ընդդիմացած է աշխարհիկ ու հոգեւորական վերնախաւի կամայական
նութիւններուն: Պաշտպանած է սահմանադրութիւնը՝ վկայակոչելով
երոպական մտածողները: Առաջադիմական գործիչներու շարքը ար-
եւմտահայ կեանքին մէջ կ'ամբողջացնէ Մատթէոս Մամուրեանը
(1830-1901)՝ «Արեւելեան մամուլ» ամսագիրին խմբագիրը:

Ազատամիտ ուղղութեան հետեւորդ էր Ստեփանոս Նազարեանցը
(1821-1879): Հայ հանրութեան զարգացումին կարեւոր միջոցը ան կը
նկատէր բարենորոգումները: Իր խմբագրած «Հիւսիսափայլ» ամսագի-
րով Նազարեանց կը հակադրուէր յետամնացութեան ու խաւարմտու-
թեան, կը պաշտպանէր **ազգային լուսաւորութեան ու կրթութեան տա-
րածման երոպական ուղին**: Հայկական կեանքի մէջ ան կողմնակից էր
եկեղեցւոյ եւ հոգեւորականութեան ազդեցութեան սահմանափակումին:

Ինչպէս Գր. Արծրունին, Բաֆֆին եւս յոյսեր չէր կապեր արեւմտա-
հայութեան սահմանադրութեան եւ Օսմանեան Թուրքիոյ բարենորոգ-
չական ընթացքին հետ:

Այսպիսով՝ հայ հասարակական մտքի ներկայացուցիչները 19-րդ
դարու 40-60-ական թթ. յատուկ ուշադրութիւն դարձուցած են հայու-
թեան քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման
խնդիրներուն: Ազգի գոյատեւումին ու զարգացումին ուղիները անոնք
կը պատկերացնէին կա՛մ խաղաղ վերափոխումներու՝ բարենորոգում-

² Գ. Այվազովսկի, Ազգութիւն եւ հաւատք // Մասեաց աղանի, 1856, թիւ 4, էջ 15:

ներու, կա՛մ ազատագրական զինուած պայքարի միջոցով:

Հասարակական հոսանքներու բովանդակութեան սկզբունքային վերանայման անհրաժեշտութիւնը տրուած է ակադեմիկոս Ս. Սարինեանի աշխատութեան մէջ³:

«Աւետաբերին ինչպէս բովանդակությունը՝ նոյնպէս ուղղությունը նոյն է ի սկզբանէ մինչև ցայսօր,- կը գրէ մամուլի տեսաբան Հայր Գրիգորիս վ. Գալեմբեանը: -Թերթն իբրեւ հայ բողոքական հասարակութեան գործիք՝ նպատակ ունի բողոքականութիւնը տարածել եւ արծարծել, ուստի եւ իւր ուղղութեան կէտը կրօնական է: Այս նպատակաւ թերթը նախապատուութիւն կուտայ միշտ կրօնական-վարդապետական նիւթերու...»⁴:

«Կրօնք ու ազգասիրութիւն» յօդուածին մէջ երկու բառերը շատ տարբեր տեղ ունին, իսկ հայ աւետարանական գաղափարախօսը կը համեմատէ կրօնը եւ ազգասիրութիւնը: «Կրօնք ու ազգասիրութիւն,- կը գրէ յօդուածագիրը,- անոնց վախճանը տարբեր է: Կրօնքին վախճանը Աստուծոյ փառքն ու մարդուն փրկութիւնն է. ազգասիրութեան վախճանը ազգի մը փառքն ու երջանկութիւնն է»⁵: Կրօնասէր անձը եւ ազգասէրը նոյն են, որովհետեւ «Իրօք կրնայ ըսուիլ, թէ ճշմարիտ կրօնասէր անձը ազգասէր ըլլալու է, ու թէ ճշմարիտ ազգասէր մը կրօնասէր ըլլալու է: Բայց աս երկու բառերը իրարմէ շատ տարբեր նշանակութիւն ունին, եւ մարդիկ անոնց իրարու ունեցած յարաբերական իմաստին վրայ այնչափ կը սխալին՝ որ աղէկ կ'ըլլայ զանոնք բաղդատել ու անոնց սահման տալ»⁶:

Ի տարբերութիւն աշխարհայեացքային համակարգերու եւ առաւել եւս փիլիսոփայութեան գաղափարախօսութիւնը **տեղայնական ծագում ունի**: Անոր համար հիմք կրնան ծառայել ինչպէս ազգային, նոյնպէս ալ ընկերային-քաղաքական ու մշակութային միաւորները: Առաւել արդիւնաւետ կ'ըլլայ մեկնակէտ ծառայեցնել այն տեսական-մեթոտաբանական խորհուրդը, որ կրօնականը իր սնող արմատները ունի մարդկային հոգիին իմացաբանական ու մշակութային շերտերուն մէջ: Ոչ միայն պատմական անցեալին, այլեւ ամէնուր կրօնականը մարդու հոգեւոր պահանջն է, եւ Աստուծոյ գաղափարը ի սկզբանէ եղած է ու կը մնայ իբրեւ մարդկային հոգիին պահանջք: Նոյնիսկ իբրեւ բանական երեւոյթ Աստուծոյ գաղափարը աշխարհայեացքային տեսակէտէ կապել կը տարբերի անոր հէնքի վրայ բարձրացող կրօնական համակարգէն:

³ Տե՛ս Ս. Սարինեան, Հայ գաղափարաբանություն, Պատմաքննական տեսություն, Եր., 1998, էջ 41-55: Ան կը տարբերակէ հինգ գլխաւոր հոսանքներ՝ կղերական, ազգային-պահպանողական, ազատամտական, ազատամիտ-պահպանողական եւ նարողնիկական՝ նորովի ներկայացնելով հայ հասարակական հոսանքներու տիպաբանական համակարգումը:

⁴ Հ. Գրիգորիս վ. Գալեմբեան, Մխիթ. Ուխտէն, Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1893, էջ 151:

⁵ «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց», Կ. Պօլիս, 1858, թիւ 86:

⁶ Նոյն տեղը:

Աշխարհագրական տեսակետին արեւելեան երկիր ըլլալէն զատ, Հայաստանը պատմականօրէն շրջապատուած էր արեւելեան ազգամշակութային արժէքներով, նոյն ատեն՝ պատմականօրէն նաեւ արեւմտեան հոգեւոր արժէքներով: Այսինքն՝ ազգասիրութիւնը միայն Աւետարանով «լուսաւորուած ըլլալու է», որովհետեւ՝ «Քրոստոնէական սկզբունքներով առաջնորդուելու է, ու հետեւապէս քանի մը բաներ կան, որոնք Քրիստոնէայ ազգասէրը պարտաւոր է իր երկրին համար փնտռել, ո՛վ ու ինչ ալ որ հակառակ ելլէ»⁷:

Ազգային փորձի տեսակետէն նոյնպէս հայկական համայնքը հեռու է արեւելեանին հարազատ համասեռ, միատարր միաւոր ըլլալէ: Հայկական հոգեբանութեանը նոյնքան խորթ է նաեւ արեւմտեան անհատապաշտութիւնը՝ անհատի մակարդակին իջեցուած եսականութիւնը: Այստեղ Ես-ը առաւելապէս կը չափուի իւրայիններու շրջանակներով (ընտանիք, բարեկամ, ընկեր, դրացի)⁸: Գուցէ նմանօրինակ մտածելակերպի հետ կ'առնչուի նաեւ հայոց աւանդական գործարարական ոգին, մասնաւորապէս Էմմանուէլ Կանտէն բարձր գնահատուած յայտնի առեւտրական շնորհքը՝ իբրեւ ժամանակին ճանչցուած մշակութային մեծ արժէք⁹: «Անիկայ պատրաստ պիտի ըլլայ աս բանը ձեռք բերելու համար մեծ զոհեր ընել, կը գրէ հայ աւետարանական գաղափարախօսը: -Ասանկ մէկ կրթութիւն մը անիկայ իբրեւ չարիքի մեծ արգելք մը, եւ օգտակար արուեստները՝ վաճառականութիւնն ու ժողովուրդին ընդհանուր հարստութիւնը, յաջողութիւնը ու երջանկութիւնը մեծապէս յառաջ տանող միջոց պիտի սեպէ»¹⁰:

Կանտը, համեմատական վերլուծութեան ենթարկելով եւրոպական կարգ մը ժողովուրդներու (անգլիացիներու, ֆրանսացիներու, գերմանացիներու, սպանացիներու եւ այլոց) ազգային բնութագրութիւնները, մեծ համարումով կ'արտայայտուի հայերու մասին՝ որպէս «բանականութեամբ օժտուած եւ աշխատասէր ժողովրդի»: Փիլիսոփան դրականօրէն կը տարբերէ հայերը նոյնիսկ «ժամանակակից յոյներէն»: Իսկ «Եւրոպական թուրքերու ազգութիւններու» մասին պարզապէս կը նկատէ, որ անոնք «երբեք չեն եղած եւ չեն կրնար ըլլալ այն, ինչ անհրաժեշտ է որոշակի ժողովրդական բնաւորութիւն ձեռք բերելու համար»¹¹: «Ազգասիրութիւնը իմաստուն ու բարերար վախճաններու համար սիրտերնուս մէջը մեր Արարիչէն հաստատուած ազնիւ սկզբունք մըն է. ու

⁷ Նոյն տեղը:

⁸ Արեւելեան կոլեկտիվիզմի եւ արեւմտեան անհատապաշտութեան հայկական մտածելակերպը այսօր ակնյայտ բացասական գործօն դարձած է, մասնաւորաբար նորաստեղծ հանրապետութեան ընկերային-քաղաքական կեանքին մէջ, բացասական գործօն՝ կլանային ազգահոգեբանական բարոյութիւններու ձեւով:

⁹ Տե՛ս **Immanuel Kant**, Anthropologie in pragmatischer Hinsicht. Reclams Universal-Bibliothek № 4, էջ 369–370:

¹⁰ «Աւետարներ եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»:

¹¹ **Immanuel Kant**, նշվ. աշխ., էջ 370:

ազգային յառաջադիմության ու երջանկության մեծ պատճառներն մեկն է: Ասիկայ կ'առաջնորդէ բարի քաղաքացիներուն, որ իրենց ազգին պատուոյն՝ ապահովութեանն ու յառաջադիմութեան պահանջած ծանրութիւնները ուրախութիւնով կրեն»¹², - կը գրէ «Աւետաբերը»: Իբրեւ օրինակ՝ հանդէսը կը նշէ Պօղոս առաքեալը. «Նախ՝ իբրեւ ազգասէր պարտաւոր է բոլոր իր ազգին մէջը **Աւետարանին ազդեցութեան տարածուիլը փնտռելու**: Ասոր մէկ երեւելի օրինակը ունինք Պօղոս առաքեալին վրայ. անիկայ արդարեւ հեթանոսներուն համար աշխատելու կանչուեցաւ Աստուծմէ, բայց տակաւին իր մարմնոյ կողմանէ եղբայրներուն ու ազգականներուն համար մեծ տրտմութիւն, ու սրտի անպակաս ցաւ ունէր»¹³:

Ակնյայտ է, որ «... ինչպէս որ կրօնքը Աստուած սիրելն է, ազգասիրութիւնը չէ թէ ընդհանուր մարդային ազգը սիրելն է, հապա մարդային ցեղին ան մասը որ իբրեւ մեր ազգը ճանչցուած է»¹⁴: Երկրորդ՝ «Աւետարանին ազդեցութեան տարածուելէն ետքը երկրորդ բանը որ Քրիստոնէայ ազգասէրը պիտի փնտռէ, իր ազգին երիտասարդներուն ամէն կարեւոր կրթութիւնն է»¹⁵:

Այսուհետ ազգասիրութիւն եւ հայրենասիրութիւն հասկացութիւնները «Աւետաբերի...» բառապաշարին մէջ հոմանիշներ են: Սակայն կան նաեւ այլ տարբերակումներ, ինչպէս՝ մարդասիրութիւն ու ազգասիրութիւն, որոնք ոչ թէ հակոտնեաներ են, այլ սիրոյ աստիճաններ, քանի որ «Կրօնքը մեզի կը սորվեցընէ որ Աստուծոյ հնազանդիք առաւել, քան թէ մարդու ու գերագոյն՝ յաւիտենական երջանկութիւնը մի միայն անոր շնորհքին ու սիրոյն մէջը փնտռենք»¹⁶:

Սակայն, ըստ «Աւետաբերի...», ազգասիրութիւնը (նոյնն է թէ՛ հայրենասիրութիւնը) ամենեւին բնական զգացում չէ, ինչպէս ընդունուած է կարծել, այլ **դաստիարակութեան ինտիլի է**: Հանդէսի ըմբռնումով դաստիարակութիւն նախ կը նշանակէ **կրթութիւն**. «Ինքը գիտէ թէ կրօնքէ ու բարոյականութենէ զատուած լոկ մտաւոր լուսաւորութիւնը բնաւ ազգ մը յաջող կամ երջանիկ չ'ընէր: Անիկայ կրօնքն բարոյակալութիւնը կրթութեան իբրև հարկաւոր աս... պիտի սեպէ: Քրիստոնէական կրթութիւնն է, որ ամէն Քրիստոնէայ ազգասէր իր ազգին համար փափաքելու է»¹⁷:

¹² «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»:

¹³ Նոյն տեղը: Տէ՛ս «Ստոյգը կ'ըսեմ Քրիստոսով ու չեմ ստեր (իմ խիղճս այլ ինծի կը վկայէ Սուրբ Հոգիով), որ մեծ տրտմութիւն է ինծի ու իմ սրտիս ցաւը անպակաս է: Քանզի ես ինքս կը փափաքէի նզովուիլ Քրիստոսէն, մարմնի կողմէ իմ եղբայրներուս ու ազգականներուս համար» (Հռովմ., գլուխ 9, 1-3): «Եղբայրնէ ր, սրտանց կը փափաքիմ ու կ'աղօթեմ Աստուծոյ, որ Բարայելը փրկէ» (գլուխ 10, 1-2):

¹⁴ «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»:

¹⁵ Նոյն տեղը:

¹⁶ Նոյն տեղը:

¹⁷ Նոյն տեղը:

Դաստիարակությունը ամենէն լուրջ նիւթն է, որ կրնայ արծարծել որեւէ հանդէս: Այդ ազգային խնդիր է եւ մեծագոյն հոգածութիւն կը պահանջէ¹⁸: Ուրեմն, ըստ «Աւետաբերի...», դաստիարակությունը ո՛չ միայն ազգային խնդիր է, այլեւ տնտեսական ու քաղաքական, քանի որ «Քրիստոնէայ ազգասէրը չնայիր թէ ինք զակընէր ունի կրթուելու կամ չէ. ասիկայ խնդիր մըն է որ ամենուն ընդհանուր օգուտին՝ պատուոյն՝ ապահովութեանն ու երջանկութեանը կը վերաբերի: Ասոր համար է որ բոլոր լուսաւորեալ կառավարութիւնները կրթութեան ծախքի համար քաղաքացիներէն տուրք կը ժողվեն, անոնց ընտանիքի տէր ըլլալուն կամ չըլլալուն չնայելով. անանկ որ բոլոր աղքատներն ու հարուստները հաւասարապէս աս մեծ օրհնութիւնն ունենան՝ որն որ կ'ազատէ իրենք հարստութենէ, թշուառութենէ ու չարագործութենէ»¹⁹:

Դաստիարակությունն ու կրթությունը նաեւ ընկերային խնդիր են. «Ընկերութիւն մը չկազմելուն պատճառը դիրքին է գուշակել. կրթութիւնն հասարակաց չըլլալով՝ լայն վիհ մը կը բաժնէ ժողովրդեան մեծ մասը միւսէն՝ նաեւ ըստ ընչից մասին. որով ընդհանուր ազգին մէջ ազնուական, քաղաքացի, կալուածատէր, արուեստաւոր եւ ռամիկ դասուց ճիշդ խտրութիւնն հաստատուած չէ»²⁰:

«Աւետաբեր...»-ը կրթութեան ու դաստիարակութեան մէջ կը տեսնէ ազգին փրկութեան ու կատարելագործման ճանապարհը: Այն անընդմէջ գործընթաց է, դադարներ ու ընդհատումներ չի հանդուրժեր, ուստի «որչափ ցաւալի բան է տեսնելը, որ մեր ազգը միայն աս դաստիարակութեան պակասութեանը համար ի՛նչ բարիքներէ զրկուէր է, եւ ի՛նչ թշուառութիւններ քաշէր է այլեւայլ դարերու մէջ: Դաստիարակութեանն զիտությունը չէ թէ միայն օգտակար, այլեւ անանկ հարկաւոր է, որ որչափ պակսի մէկ ազգի մը կամ տան մէջ, ան ազգն ու ան տունն ալ նոյնչափ պակսած կը մնայ իր մարդկությունէն»²¹, -կը գրէ «Աւետաբեր...»-ը:

Կրթութեան ու դաստիարակութեան պակասը, ի վերջոյ, ըստ «Աւետաբեր...»-ի, ո՛չ միայն ազգային, ո՛չ միայն տնտեսական կամ քաղաքական, այլեւ ոչ պակաս կարեւորութեան խնդիր է, քանի որ «որչափ որ մէկը շատ կատարելութիւններ ունենայ, այնչափ աւելի կարօտ կ'ըլլայ կրթութեան, ապա թէ ոչ, կատարելութիւնները առանց կրթութեան մնալով՝ ամէն մէկը կը դառնան կ'ըլլան մեյմէկ մեծամեծ մոլութեանց արմատներ»²²:

¹⁸ «Իրենց նախաձեռնած կրթական հաստատությունների միջոցով ամերիկացի միսիոներները նպաստեցին հայերի կրթական գործին,- կը նկատէ հայ աւետարանականը: -Չազարատը հայ երիտասարդներ իրենց բարձրագոյն ուսումը ստացան ամերիկացի միսիոներների բացած բարձրագոյն ուսումնական հաստատությունների մէջ»: // **Շ. Քասունի**, Բողոքականութեան մշակութային ծառայությունները հայ ազգին, էջ 9-12:

¹⁹ «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց»:

²⁰ Նոյն տեղը:

²¹ Նոյն տեղը:

²² Նոյն տեղը:

Ազգային կրթութեան խնդիրը յոյժ անհրաժեշտութիւն է եւ զայն փաստելու հարկ չկայ: Ազգային կրթութիւն ըսելով՝ «Աւետաբեր...»-ը զայն կ'ընկալէ ո՛չ միայն բուն իմաստով, այսինքն՝ ազգային աւանդներու վրայ ստացած կրթութիւնը, այլեւ համազգային, համաժողովրդական, ժամանակակից հասկացութեամբ՝ զանգուածային կրթութիւնը, որովհետեւ անհատներու կրթութիւնը, թէեւ անհրաժեշտ, բայց բաւարար չէ, որ ազգը հասնի ընդհանուր բարեկեցութեան: «Եւ որչափ վնասակար բան է առանց դաստիարակութեան մեծնալը, այնչափ ալ դժուար է կատարեալ դաստիարակութիւն տալը, անոր համար ալ յայտնի է որ մեծ մտադրութեամբ պէտք է դաստիարակութեան վրայ խօսիլ, լսել, ու ըսածները գործադրել»²³, - կը նկատէ յօդուածագիրը:

Յատկապէս դպրոցին մէջ կրթութիւն ստանալու կարելորութիւնը «Աւետաբեր...»-ին մէջ նոյնպէս պատճառաբանուած է գուտ մանկավարժութեան տեսանկիւնէն. դպրոցը սաներուն կ'օգնէ ո՛չ միայն կեանքի բազմազան հանգամանքներու մէջ ճիշդ կողմնորոշուիլ, այլեւ ուղեցոյց է նոյնպէս «հարկաւոր ու օգտակար» գիրքերու ընտրութեան եւ «ինչպէս կարդալու» համար: «Անհաւատութիւն սորվեցնող գիրքերու ազդեցութիւնը» յօդուածին մէջ աւետանական հայ հրապարակախօսը կը գրէ. «...գիրքերը կարդալէն յարմարապէս սա երկու հետեւանքն յառաջ կ'ուզան ըսելը անհրաւորութիւն ըլլալ չենք կարծեր: 1. Հաւատացելոց մէջ տարակոյս: 2. Կենաց ապականութիւն»²⁴: Հանդէսի այլ համարի մը մէջ, բանավիճելով ուսումը հաւատքին հակադրող մտայնութեան հետ, «Աւետաբեր...»-ը համոզուած կը պնդէ. «Չէ՛, ուսումը չէ անհաւատութեան պատճառը, օտար լեզուները չեն զմարդիկ արողը, հապա՛ անկատար ուսումը, **գրքերուն աղէկն ու գէշը իրարմէ չգատելը**»²⁵:

Խմբագրութիւնը դաստիարակութեան մէջ կը գատէ քանի մը խնդիրներ, որոնք առհասարակ կը խոչընդոտեն ազգին յառաջադիմութեան: «Անմիտ մտաց»-ը դաստիարակութեան, այսինքն՝ կրթութեան պակասի հետեւանքն է, ուստի այս ամենակարեւոր խնդիրն է, որ ազգը պէտք է դնէ իր առջեւ եւ ամէն ջանք գործադրէ, որպէսզի կարողանայ լուսաւորուիլ: Այդ ուղիով կ'անցնին եւրոպական ազգերը, այդ խնդիրը կը քննարկէ ու կ'ընդունի հայ աւետարական հանդէսը. դաստիարակութիւնը այն խողովակն է, որ կրնայ նպաստել «ներդաշնակութեան զարգացման»:

Երկրորդ՝ աղքատութիւն եւ **«օձտումն եղբարց յիրարաց»**: Վերջինը՝ «օձտումն եղբարց յիրարաց»-ը, հանդէսի կարծիքով, մեր պատմութեան ամենաողբերգական կողմն է: Նաեւ անմիաբանութիւնն ու երկպառակութիւնն են եւ անցյալի, եւ ներկայի կացութեան հիմնական պատճառները:

²³ Նոյն տեղը:

²⁴ Նոյն տեղը, 1864, թիւ 210:

²⁵ Նոյն տեղը, թիւ 212:

Ինչ կը վերաբերի երրորդ խոչընդոտին՝ աղքատության, այսինքն՝ անոր ընկերային բովանդակությանը ու վերացումին, «Աւետաբեր»-ը նոր հայեցակարգ, ամբողջական դիրքորոշում չունի, բացի տակաւին քրիստոնէութեան ընդունման առաջին դարերու եկեղեցոյ հայրերու մշակած սկզբունքները: Եկեղեցոյ հայրերը, անտարակոյս, սոցիալական, տնտեսական խնդիրներու մասնագէտներ չէին: Անոնք աստուածաբաններ էին եւ տնտեսական խնդիրներու նկատմամբ ունէին իրենց դիրքորոշումը՝ նիւթական բարիքներէն օգտուելուն տալով միմիայն բարոյական գնահատական: Անոնց «տնտեսութիւնը», եթէ կարելի է այդպէս արտայայտուիլ, աւելի շուտ «փրկութեան տնտեսութիւն» էր, քան քաղաքական կամ ընկերային: Անշուշտ աստուածաբանական այդ հայեացքը անոնց արգելք չէ տեսնելու աղքատութիւնը՝ որպէս աղետ եւ հարուստներու համար, եւ աղքատներու, քանի որ առաջիններուն շոյլ կեանքը զանոնք կը տանի դէպի բարքերու այլասերումի, իսկ երկրորդները՝ կա՛մ կործանումի, կա՛մ իրենց ճակատագրին դէմ ընդվզումի: «Ես միշտ ասում եմ, թէ հարստութիւնը դաւաճանաբար փոխում է նրանց, ովքեր վատ են օգտագործում այն, - երկրորդելով Փրկիչին, կը գրէ չորրորդ դարի խոշորագոյն աստուածաբան Ս. Յովհան Ոսկեբերանը, -... երբ ինչ-որ մէկը հոգ է տանում նրա մասին, հէնց այդ ժամանակ դաւադրաբար դաւաճանում է: Ինչո՞ւ ես այդքան հոգ տանում հարստութեան մասին, երբ այն երբեք հնարաւոր չէ պահպանել: Ցանկանո՞ւմ ես պահպանել այն: Ուրեմն՝ մի թաքցրու, այլ բաժանիր աղքատներին»²⁶:

Կարելի է ըսել, որ «աղքատութեան վերացման» այս ըմբռնումը կը կազմէ աւետարանականներու «տնտեսական» հայեցողութեան հիմքը, որովհետեւ Յովհան Ոսկեբերանը ամենէն շատ թարգմանուած ու փառաբանուած հեղինակն է²⁷: Նշենք նաեւ, որ եկեղեցոյ հայրերուն միանգամայն օտար էր տնտեսական աճի գաղափարը, անոնք բնաւ չէին խորհիր հարստութիւնը խոշորցնելու մասին եւ կ'առաջնորդուէին բարիքներու հաւասար բաշխումի սկզբունքով՝ ուրիշներու հետ կիսել այն ամենը, ինչ արդէն ունին:

Քրիստոնէական աստուածաբանութեան ըմբռնումով, որ տիրապետող էր միջնադարուն եւ ընդհուպ 19-րդ դարուն կէսերը, բարիքներու բաշխումը պէտք է կատարուի երկու եղանակով: Առաջին՝ բաշխումը պէտք է կատարուի կամաւորութեան սկզբունքով: Այս կարելոր ու պարտադիր պայման է, քանի որ ռեւէ մէկու հետ հարստութիւնը կիսելու կամ բաժնելու անհրաժեշտութիւնը հոգեւոր բնոյթ պէտք է ունենայ:

²⁶ **Սուրբ Յովհան Ոսկեբերան**, Ճառերի ընտրանի (թարգմ. Թադէոս Խաչատրեանի), Ս. Էջմիածին, 2007, էջ 88-89:

²⁷ Ոսկեբերանի հայերէն թարգմանուած գործերու մէջ կարելոր տեղ կը զբաղեցնեն «յԱւետարանագիրն Մատթէոս» (գիրք 1, 2, 1826) եւ «Մեկնութիւն Թղթոցն Պատմաւսի», հ. 1, 2 (1862) մեկնութիւններու վեներիկեան հրատարակութիւնները:

Հարցին քաղաքական-սոցիալական կողմը բնաւ չի հետաքրքրեր եկեղեցւոյ հայրերու մեծ մասին: Բացառութիւն կը կազմէ միայն Երանելի Օգոստինոսը, թեպէտեւ ան ալ խնդիրին իրաւական տեսակիւնէ չի նայիր: Յայտնի է, որ եկեղեցւոյ հայրերու գրուածքներու մէջ վախճանաբանականութիւնը վճռորոշ դեր ունի. անոնք աւելի շատ կը պնդեն, թէ քրիստոնէականները այս աշխարհէն չեն, քան թէ կը շեշտեն աշխարհին մէջ անոնց գործունէութեան կարեւորութիւնը: Երանելի Օգոստինոսը խստօրէն կը տարբերակէ միայն երկու «քաղաք» (արքայութիւն)՝ Աստուծոյ քաղաքը եւ սատանայի քաղաքը, իսկ մարդկային քաղաքը սոսկ կ'ենթադրուի²⁸:

Երկրորդ, բարիքներու բաժանումը հաւասարողական բնոյթ պէտք չէ ունենայ. հարուստները կու տան աղքատներուն, սակայն ասկէ անոնց ընկերային կարգավիճակը չի փոխուիր (կը կարծենք՝ սոցիալական-տնտեսական հարցերու մէջ այստեղ պէտք է որոնել սոցիալիզմի ու քրիստոնէութեան տարբերութիւններէն մէկը, մարքսիզմի տեսակէտէն, թերեւս, ամենակարեւորը): Նաեւ նշենք, որ հարցի նման դրուածքը ամենեւին արդարութեան պակասէն չէ, որովհետև այն կը փոխհատուցուի **քրիստոնէական սիրով**, որու մասին կը խօսին հայրերը: Հակառակը, **քրիստոնէական սէրը** աստուածաբանական հիմնական առաքիւնութիւններէն է, քրիստոնէայի հոգեւոր կեանքի ալֆան ու օմեկան: «Մինչեւ որ եսասիրութիւնը տեղ չտայ քրիստոնէական սիրոյ՝ տարածելու իր թելերը թշուառութեան վրայ, մինչեւ որ արդարութեան ճշմարիտ գաղափարը հիմը չըլլայ... իբր ուղղիչ եւ վարիչ սկզբունք, երբեք աշխարհ պիտի չունենայ իր կատարեալ ազատութիւնը խօսքի, ազատութիւն առուտուրի, ազատութիւն սահմաններու»²⁹, - յառաջաբաններէն մէկուն մէջ կը գրէ «Աւետաբեր...»-ը: Ըստ հանդէսի, աղքատը ոչ միայն օգնութիւն կը ստանայ, այլեւ կը պատկանի եկեղեցական հօտին, որ կը նշանակէ թէ անոր դէմքը նոյնպէս Քրիստոսի պատկերն է: Այս բարձր եւ պահանջկոտ «եկոնոմիա» է, որմէ կախուած է եւ հարուստներու, եւ աղքատներու փրկութիւնը, բան մը, որ ուղղակիօրէն կրնայ մարդկայնացնել հանրութեան քաղաքական ու ընկերային կեանքը: Այսպիսով, սեփականութիւնը չի դատապարտուիր, այլ կը սահմանափակուի՝ մասնաւորաբար որոշակի պարտադիր պահանջներէ ելլելով: «Ազգի մը հարստութիւնը իր ժողովուրդին բազմութեանը չբաւելը շատ անգամ նոյն հարստութեան քիչութենէն չէ, այլ անոր գէշ բաժնուելէն ու գէշ գործածուելէն»³⁰, - կը գրէ «Աւետաբեր...»-ը «Ազգ եւ կրօն» յօդուածին մէջ: Որպէսզի այդպէս չըլլայ՝ հանդէսը մարդկութեան ապագան դարձեալ կը կապէ կրթութեան հետ: Սակայն նման կացութեան պատճառը, ըստ հանդէսի, ոչ թէ տնտեսական օրէնքներով պայ-

²⁸ Տե՛ս **Блаженный Августин**. О граде Божием. В 22-х книгах. Т. 2. М., 1994, էջ 246:

²⁹ «Աւետաբեր եւ Շտեմարան պիտանի գիտելեաց», 1859, թիւ 106:

³⁰ Նոյն տեղը, թիւ 107:

մանաւորուած փոփոխութիւններն են, որոնք կը քայքայեն գիւղական համայնքները, այլ յետամնացութիւնը՝ կրթութեան պակասը:

Բանալի բառեր – «Աւետաբեր», ազգասիրութիւն, դաստիարակութիւն, ազգային կրթութիւն, եկեղեցւոյ հայրեր, աղքատութիւն, տնտեսական զարգացում, ազգային լուսավորութիւն

АРУТЮН СЕЛИМЯН – Вопросы воспитания и образования в журнале «Аветабер». – В 1840–1860-е годы проблема политического и экономического развития армянского народа приобрела первоочередное значение. Журнал «Аветабер» («Провозвестник и Сокровищница полезных знаний») начал издаваться в период, когда западноармянская печать пользовалась наибольшей свободой; пик его пришёлся на 1854–1864 гг. Значительная часть армянской интеллигенции не сомневалась, что лучший способ противостоять османскому и российскому давлению – сохранить национальные традиции, язык и религию. Понятия «любовь к народу» и «патриотизм» выступали в «Провозвестнике» синонимами. Оба эти понятия более всего обуславливались воспитанием, под которым авторы журналы понимали первым долгом образование, требовавшее постоянного внимания и заботы. «Провозвестник» видел в образовании не только национальную, политическую и экономическую проблему, но и путь к спасению и совершенствованию нации.

Ключевые слова: «Аветабер», патриотизм, воспитание, национальное образование, отцы церкви, бедность, экономическое развитие, просвещение

HARUTYUN SELIMYAN – Education and Upbringing Issues in “Avetaber”. – Between the years 1840 and 1860, the questions of political and economic development got primary importance for the Armenian people. The “Avetaber” and “Eshdemaran bidani kidelyats” journals were published in a period (1854-1864) that was considered the most liberal period for the Western Armenian press. Most of the Armenian figures were convinced that it was necessary to preserve the traditions, language, and religion of the nation to face the Ottoman and Russian pressures.

According to the journal, “nationalism” could be illumined only by the Gospel. The concepts of nationalism and patriotism were synonymous with the vocabulary of “Avetaber ...”. Nationalism and patriotism are considered primarily as a matter of education. According to the journal, education is a national question and requires great care. Moreover, and according to “Avetaber ...” education is not only a national issue but also an economic and political one. Education is also a social issue. “Avetaber ...” considers education and proper upbringing to be the path of salvation and perfection of the nation.

Key words: “Avetaber”, patriotism, upbringing, national education, church fathers, poverty, economic development, national enlightenment

Ներկայացվել է՝ 13.05.2019

Գրախոսվել է՝ 10.09.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019